ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Ակադեմիկոս ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հիսուն տարի առաջ, 1915 թվականին, սուլթանական Թուրքիայի կառավարող կլիկը փորձեց ֆիզիկական բնաջնջման ենթարկել մեր ժողովրդի արևմտահայ հատվածը։ Թուրքական ազգայնամոլները, հենվելով կայզերական Գերմանիայի ռազմատենչ ուժերի վրա, սրի քաշեցին հարյուր հազարավոր մեր հայրերին ու մայրերին, քույրերին ու եղբայրներին։ Անմեղ զոհերի ընդհանուր թիվը կազմեց մեկ միլիոնից ավելի։

Արևմտահայության կոտորածները իրագործվում էին հրեշավոր անգթությամբ։ Կորցնելով իրենց մարդկային կերպարանքը, ջարդարարները դիմում էին ամենազազրելի, ամենաբարբարոսական միջոցների։ Նրանք սրախողող էին անում երեխաներին ու կանանց, այրում էին տներում ու եկեղեցիներում հավաքած մարդկանց, իրենց զոհերին նետում էին գետերն ու ձորերը, կենդանի-կենդանի թաղում հողում և այլն։ Ականատեսները սարսափով ու ցասումով են նկարագրում արյունարբու դահիճների կազմակերպած այդ զարհուրելի սպանդը։

1915 թվականի մեծ եղեռնը աննախընթաց էր ոչ միայն մեր ժողովրդի, այլև ամբողջ մարդկության պատմության մեջ։ Այդպիսի մասսայական և ահավոր կոտորած դեռևս չէր եղել ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ։ Աշխարհի բոլոր ժողովուրդները և նրանց ականավոր գործիչները ցնցվեցին կատարված անցքերից և իրենց բողոքի ձայնը բարձրացրին թուրքական դահիճների դեմ։

Հայկական կոտորածները արդյունք էին ոչ թե առանձին ու պատահական դիպվածների, այլ այն հայաջինջ պետական քաղաքականության, որ վարում էր թուրքական կառավարությունը դեռևս անցյալ դարի վերջերից։ Հետևվելով իրենց պանթուրքիստական ծրագրերին, թուրքական փաշաները ձգտում էին գրավել ամբողջ Կովկասը, Մերձվոլգյան շրջանը և անգամ Միջին Ասիան։ Սակայն թուրքական իմպերիալիստների նվաճողական ծրագրերին մեծ չափով խանգարում էր հայ ժողովուրդը, որը ցանկանում էր ազատագրվել օսմանյան բռնապետության ծանր լծից։ Պանթուրքիստները որոշեցին գենոցիդի ենթարկել հայ ժողովրդին։ Եվ ահա կառավարության նախօրոք մշակած ծրագրով ու պահանջներով սկսվեց արևմտահայերի ընդհանուր կոտորածը։

Կազմակերպելով իր մեծ ոճիրը, երիտթուրքերի արյունարբու կառավարությունը նպատակ ուներ վերջ տալ հայ ժողովրդին, կամ, ինչպես իրենք ջարդարարներն էին ասում, «անհետ ջնջել վնասակար ցեղը»։ Սակայն թուրքական դահիճները սխալ դուրս եկան իրենց հաշիվներում։ Ծանր հարվածներ ստացած, արյունաքամ եղած, բայց տոկուն ու հերոսական հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, ոտքի կանգնեց, գտավ ամպերի մեջ իր ուղեցույց աստղը, այն աստղը, որը հեռավոր հյուսիսից փայլեց մեզ և որի անունն է Հոկտեմբերյան հեղափոխություն։

Պայքարեց ժողովուրդը. դուրս եկավ սարսափելի դժվարություններից, և այսօր եղբայրական ազգերի համերաշխ ընտանիքում կերտում է իր լուսավոր ներկան ու ապագան։

Այսօր, հանձին Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության, հայ ժողովուրդը գտել է իր ճանաչումը, նա հպարտ և հավասար անդամ է աշխարհի ամենահզոր պետության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության։

Մենք հպարտանում ենք մեր անցյալի ազատասեր զորավար Անդրանիկով և անցյալի բազմաթիվ քաջ հայորդիներով։ Բայց հպարտ ենք նաև, որ Անդրանիկի կրծքում վառվող կրակը չի մարել, այլ ուժեղանալով՝ տարավ հայ զինվորին հայկական դիվիզիայի, Սովետական բանակի կազմում, մինչև Բեռլին, որ այդ կրակը հանձինս մարշալ Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, օդային ուժերի մարշալ Սերգեյ Խանֆերյանցի ու հարյուրավոր այլ զորավարների, ճանաչվել է մեր մեծ Միության բոլոր ժողովուրդների և ամբողջ ազատասեր մարդկության կողմից։

Այսօր մեր արվեստը գտել է ընդհանուր ճանաչում։ Երբ որ մեր մեծ վարպետ Մարտիրոս Սարյանը պարգևատրվում է Միության կառավարության կողմից ամենաբացառիկ ձևով ու կարգով, մենք ընդունում ենք այդ որպես հայ տաղանդի բարձր գնահատում։

Մենք պարծենում ենք, որ Հայաստանը այսօր դիտվում է Սովետական Միության մեջ որպես բարձր մակարդակի գիտություն ունեցող մի հանրապետություն։

Կարճ ժամանակամիջոցում Հայաստանում ստեղծվեց հզոր արդյունաբերություն, որը կազմում է մեր ժողովրդական տնտեսության կարևորագույն հիմքը։

Բրոք կարելի է պարծենալ այսպիսի հայրենիքով։

Եվ զարմանալի չէ, որ ամեն մի ազնիվ հայ, որտեղ էլ որ նա լինի, վաղուց ի վեր ճանաչում է Սովետական Հայաստանը՝ որպես իր միակ հայրենիքը։

Հայ ժողովուրդը դիտում է իր հերոսական շինարարական աշխատանքի արդյունքները որպես մեծ եղեռնի անմեղ զոհերի անմահ հիշատակի հավերժացում։ Մեծ եռեռնի զոհերի լավագույն հուշարձանը — դա մեր վերածնված, ծաղկող և տնտեսապես հզոր Սովետական Հայաստանն է։